

ԱԿԱՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՁԱԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԵՆ ՍԵՎ ՈՐԵՐԻՑ

891.99
2-21

Պետական Հրատարակչություն
ՖՈՐԵԿԱՆ

- 6 NOV 2011

ԱԿՑՈՎԱԿ ԲՆԹԵՐՑՈՎԴՐ ԴՐԱԴԱՐԱՆ

891.99

Հ-21

1009
1009
1009

Վահ

ԱՐՏԱԿ ՀԱՅՆԱՁԱՐՅԱՆ

ԵՆ ՍԵՎ ՈՐԵՐԻ 8



ՀՍԽՀ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅՆԱՁԱՐՅԱՆ
Ե. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
1936

13 JUL 2013

96996

Պատ. Խմբ. [REDACTED]
Տեխ. Խմբ. [REDACTED]
Սրբազրիչ՝ Հ. Դոլովիսյան

Գլավիտի լիստոր 1100, պատկեր 615,
Հրատ. 3725, տիրաժ 5000

Պետհրատի տպարան
Յերեվան, II Գնուռի, 4

Հանձնված և արտադրության 1936 թ. ապրիլի 10-ին
Ստորագրված և տպելու 1936 թ. մայիսի 10-ին

ԳԻԱԸ 30 ԿՈՊ.

А. ШАХНАЗАРЯН
ИЗ ЧЕРНЫХ ДНЕЙ

Гиз ССР Армении, Эривань 1936 г.

1 2 III 7746
Տարիներ առաջ,
Յերբ տիրում եր դեռ որենքը ցարի,
Յերբ չքավորը դեռ իրավազուրկ՝
Ստրուկ եր տիրոջ փողի ու փարի,
Են դժոխալին, դաժան խավարում
Կուլակներն եյին
Ճիպոտի ուժով զլուղ կառավարում։

Աղքատը ով եր, քանի՞ գլխանի,
Վոր իշխանի դեմ ձեն, ծպտուն հանի։
Նրա բաժինը քըտինքն եր դառը,
Մի կտոր սև հաց ու ջուրը սառը։
Ինքը՝ մերկանդամ, լերեխեն՝ բոբիկ,
Ցրտից կուչ եկած, կինը՝ անշապիկ։

Նա տարին բոլոր քարի հետ քաղվեր,
Զարչարվեր, տքար, հողի հետ մաղվեր,
Դատածը կը տար պարտքի տոկոսին

Յեկ ապա նորից
 Աչքը կը անկեր ցելի ակռոխն:
 Վորքան ել առատ, լի լիներ տարին,
 Աղքատի խովը դեմ կառներ քարին:
 Նա լիքը աշուն չեր տեսնի որում:
 Ճանձը ածում եր, իսկ ճիճուն՝ կրում...

2

Մի զարդանդ կուլակ կար են հին գլուղում,
 Վորի վոտի տակ գետինն եր դողում,—
 Վոսկան աղեն եր, ինքը տանուտեր՝
 Նշանը կրծքին. լեղբալրը՝ տերտեր:
 Նրա մի տղեն՝ դառնարյուն, գոթի*)
 Ուներ մեծ խանութ մանրունք ու ճոթի,
 Ուր խեղճ գլուղացոց թակարդն եր քցում,
 Տզրուկի նման ծծում ու ծծում,
 Կիսամորթ անում, թողնում անոթի:

Իսկ լերկրորդ տղեն՝ բեղերը սրած,
 Փոչոտ փափախը ծոծրակին դրած,
 Արծաթ խանչալով, կողքին՝ մառւղեր
 Աջ ու ձախ խփում,
 Զարդում եր, թափում,
 Ում խելքին փչեր, ինչ սիրան ուզեր...

*) Գոթի—վատ, ատելի:

Առլան Սերգոն եր. ով պիտի խոսեր
 Կամ թե ծուռ նայեր, թթու խոսք ասեր:
 Կըակ եր թափում կալծակ աչերից.
 Արյուն եր կաթում խանչալի ծերից:

3

Իսկ Վոսկան աղեն. դա տերն եր գեղի,
 Վոր վոչ մի մարդի չեր առնում բեղի,*)
 Նա թիկունք ուներ Մասիս սարի պես.
 Չափ չը կար կալք ու գուլքերին պես-պես.

Տուն ուներ՝ պալատ, սեփական գութան,
 Ցերեք քլանլան ձի. ութ—իննը կթան.
 Չորս ընտիր ալգի, տասը աչք ջաղաց,
 Աև որվա համար՝
 Մի պուլիկ վոսկի մառանում թաղած:
 Չորս բատրակ ուներ ժրաջան, արի.
 Ու... մի գլուղ լիքը մշակներ ձրի...

Նա գիտեր, ինչպես լուղել ու շահել,
 Ում արժանի յե: Ով տեղը գալիս,
 Կարող ե հասնել, թիկունք տալ, պահել:
 Պըիստավ, քննիչ, չինովնիկ պես-պես
 Ով մտրակ ուներ, կամ թուղթ որենքի,
 Քարբասը բաց եր առջևն ամենքի:

*) Բեղի չառնել—մարդատեղ չդնել:

Դե շեն-ոջախ եր.

Որը հարյուրը կը մտներ, կուտեր՝
Քուֆթա, խորոված, ճուտերով փլավ,
Զալ ու փունջ անուշ, գինիներ լավ-լավ...
Փառք աստծու, չը կար
Գառներ ու հավեր, կամ գաթա, շաքար:
Կաշառքը ծով եր: Շեն մնա զյուղը,
Դոնիցն եր ծորում մեղրն ու լուղը:
Ու վորքան ուտում, վատնում են տանում՝
Ենքան լցվում եր ոջաղն, ուռմանում:

4

Վոսկանենց տան կից՝ ձորակի ուսին
Ապրում եր աղքատ Նախըշոնց Սոսին:
Սա վոչ արտ ուներ, վոչ կովեր ու յեզ.
Մենակ՝ տան առջև չորս լիտր պարտեզ,
Ուր մատադ ծառերն ընտիր մրգերի,
Թև—թևի տված ու շարված պարի՝
Անուշ հովի հետ տաղ են շշնջում,
Ու դալար ծաղկանց բուրմունքը շնչում:
Սա մի դրախտ եր ճոխ, յեղեմական,
Վոր բուլը անուշ ու անմահական
Սփռում եր շուրջը, տարածում հեռու,
Լցնում սար ու ձոր, արոտ ու առու...

Վոսկանը վերից աղահ աչքերով
Նայում եր ներքե, նայում որերով
Յեվ փափագում եր՝ ինչ գնով լինի,
Եղ չքնաղ պարտեզն իրանով անի:
Բայց նա լավ գիտեր, վոր դյութիչ ալգին՝
Դա Սոսու կյանքն ե, մուրազն ու հոգին:
Թեկուզ լոթ մեխ տաս ամեն մի մատին,
Նա մոտ չի թողնի իր սահման պատին:
Կոպիտ ե տերը: Պետք եր մտածեր,
Նրան ուրիշ կերպ խեղդել ու սանձելք

5

Ու մի որ աղեն կանչում ե Սոսուն
Վորպես բարեբար, խրատում, խոսում.
—Դու առողջ մարդ ես, ինքդ ել ջահեր
Սփսոս, չես կարում տուն ու տեղ պահելք
Անգյալի նման
Պառկել ես տանը, վոտներդ ցցել
Ու աչքդ մի թիզ պարտեզին ցցելք:

Դու աղամարդ ես, սար ու ձոր չափի:
Զեռ ու վոտ արա, ծով քրտինք թափի,
Քարը տուր գլխիդ, գլուխդ քարին,
Բեր տունըդ լցըու աստծու իր բարին:

Քրեմ ՏԱՐ ու բԵՐ, գնալ-գալ արա,
Վոր ձեռիդ հաղա միշտ փող ու փարա,
Վոր առնդ լցվի, ծովի պես ծիա,
ԹԵ չե... մեր հողում բարաքաթ չը կա...

— Լավ աղա... ինչով:
Վաչ ձի կա, վոչ փող:
— Ե՛, զատարկ խոսք ա... Դա պատճառ չի, թող...
Առ լես քեզ հարլուր մանեթ տամ ահա,
Տար մի լավ ձի առ. ուժեղ, աժդահաւ
Առ, թող վարձք լինի սա ել իմ հոգուն
Բալց մարդի չասես: (Վարձքը հենց ենա,
Վոր ծածուկ մնա աշխարհից թագուն):
Թող մենակ վերև առտված իմանատ:

Վոսկանը ծոցից հանեց փող մի դարս
Համրեց ու դրեց դրկիցի բուռը.
— Առ, հարևան ջան, յերբ կը տաս՝ կը տաս:
Հանգիստ կաց, ել լես չեմ դա քո դուռը:
Ուրիշների պես՝
Փեշտ չեմ քաշի
Առավոտ ճաշի:

●
Սոսին, որհնելով ումր-արևն աղի,
Թռավ՝ ձի ճարի: Վոսկանը թԵ՝ կաց,

Մատդ՝ մի պուճուր թանաքում թաղի.
Կացրա թղթին, հետո դուռը բաց: —

Դրկիցը կնքեց մուրհակն սպիտակ...
Հետո գավառը տվեց վոտնատակ,
Մինչև վոր ճարձք լավ ձի, իր ասած,
«Նարինջ» անունով մի պատկեր՝ քաշած...

¶

Յեվ ահա Սոսին ընկնելով ձեռ վոտ,
Վազեց փալանկար կիրակոսի մոտ,
Աղաչ ու պաղատ, թե վոնց վոր լինի,
Որն-եգուց կուպչիկ*) փալան պիտ շինի:

§

Վարպետը խաբեց: Ու մերկ եր դեռ ձին,
Յերբ մի որ ահա գիշերվա կիսին
Կաղ գզիրն եկավ, ձեն տվեց Սոսուն,
ԹԵ՝ ձիուդ կեր տուր ու պատրաստ պահի,
Վոր կոռ ենք տանում՝ որն իրեք շահի.
ԹԵ՝ տանուտերին նեղում են, տանջում.
Թագվորին վայել ձի լեն պահանջում: —

Շատ վեր-վեր թռավ, ճմովեց տերը,

*) Կուպչիկ — վրան լավ նստող, կպչող:

Վայնասուն արին ծուտոն ու մերը,
 Բայց լերք վոր Մկոն շեշտեց անունը
 Աղա Վոսկանի,
 Դե նրա մի խոսքն ով երկու կանի.
 Անձնատուր լեղան... Ու լոեց տունը:

 Աքլորականչին թռավ Նարինջը,
 Թողնելով տիրոջ սրտում մրմունջը:

9

Նույն իրիկունը ձին պիտի դառնար,
 Վոր Սոսին չարչու ապրանքը բառնար,
 Սարերը տաներ,
 Տան ապրուտն հաներ:

 Բայց լերը որն եր՝ Նարինջը չը կար:
 Տերն աչքը ճամբին հեռում եր տկար...
 Բարձր լալիս եր ու ծեծկվում նստոն...
 Մոր փեշը բռնած՝ մրմնջում ծուտոն:

10

Ահա գիշերը հին դուռն են թակում:
 Սոսին շնչառապ ցցվում ե բակում,
 Կարծելով ձին եւ Բայց...ցավ ու սոսկում...
 Գզիր Մկոն եր, քարշ տալեն վոտը,
 Տիրոջը բերել Նարնջի բոթը...

10

Թե՛—բա չես ասի,-
 Վոր ձիդ վեր ընկել, սատկել ա ձորում:
 Ասում եմ, վալթե չար աչք ա դիպել
 Կամ թե չե հնուց ցավ ելել փորում...
 Եհ փառք տուր ասսուն, վոր բախշեց բալիդ,
 Թե՛ չե վալ կը գար եդ աղքատ հալիդ:
 Թե՛ քիթը խոռվեր ձիավոր աղի,
 Քեզ կը քաշեյին կրակ ու դաղի...
 Ել ի՞նչ ես շշմել, գնա բեր կաշին,
 Քանի շուն ու գել չեն թափվել լեշին:—

Ասաց ու քաշվեց նա՝ լնգին տալեն,
 Իսկ Սոսին մնաց
 Շշմած, քարացած...
 Ապա խեղդվելով, մըմնջաց լալեն.
 — Խորտակվի՛ լերկինք, քո դատ-դիվանը...
 Յեվ տունը տարավ սուզ ու շիվանը...

11

Յերբ գարունն լեկավ, ալդին կանաչեց,
 Աղեն մարդ զրկեց ու Սոսուն կանչեց,
 Թե՛ — Այ հարևան, այ իմ աչքի լիս,
 Տալացուկ ունես, խի չես մոտ գալիս:
 Ասենք ելածը
 Յերկու հարլուր ա, մեծ գումար ել չի,
 Վոր մարդ որենքի, դատի դուռ կանչի...

11

Գլուխդ վկա, գլուխդ եմ ասում,
 Յես ել պակութիւն, պարտք ունեմ սասում
 Թե չե՛ անունը ով կը տար սկի,
 Թեկուզ վոր տեղովս ուտելիր, խոսքի:
 Բայց պարտքատերն ա հոգուս ջուր դրել,
 Ուզում ա ելած-չելածըս գրել...

Բաս, եսենց զուլում, հարևան Սոսի,
 Դե հիմի ասա, հիմի դու խոսի,
 Տեսնեմ լերը պիտի քո պարտքը թափես,
 Համա տես, շըլնեմ- չիմանամ խարես:
 Փողըս պիտի տաս իրեք-չորս որում...
 Հը, դժարդ եկավ... ծոծրակդ ես քորում:
 — Ինչքան ա պարտքս... — կմկմաց Սոսին,
 — Դուզ լերկու հարյուր մանեթ ա, ասին:
 — Վայ, հարյուր, աղա, հարյուր եր, ախար...
 — Ընը... աշքս լույս. պարտքիցդ փախար...
 — Հարյուր ա, աղա, վայ լերկինք, գետինք...
 — Դե վոր ետպես ա, կորի, դուրս կորի.
 Ափսոս լավութիւն, ափսոս լերախտիք,
 Վոր լս քեզ նման շներին արի:

Զալրացավ աղեն ու պարտապանի
 Մեջքից հրելով, փորձեց դուրս անի...

Բայց Սոսին շշմել, սրձան եր դառել,
 Լեղուն պապանձվել, աչքերը՝ սառել.
 — Կորի իմ տանից, կորի, անսպեռ,
 Կորի որն եսոր փողս ճարի, բեր:
 Կորի դժողքը, կորի յեմ ասում,
 Թե չե հենց կրակ, հենց զուլում-ցասում
 Կը բերեմ գլխիդ, վոր մնաս մոլոր.
 Տոլկի կը խաեմ տուն-տեղդ բոլոր...
 Յես շանից ցնկնած, շնւն պիտի լինեմ,
 Թե վոր քեզ տկոր, մուրացկան չանեմ...

12

Աղմուկի վրա վեր թռավ բակից
 Կատաղած Սերգոն՝
 Իրա թասընկեր Մացոն՝ քամակից,
 Առանի ձեռին դաշույնը շողաց...
 Սոսին սպրդնեց.
 Նրա աչքերում արցունքը ցողաց,
 Բայց Մացոն պահեց հարվածն ահարկու,
 Խեղճի շնքին դարկեց մի-լերկու
 Ու բոթբոթելով, դուրս գցեց հաշտը:
 Սանդուխքի գլխին մի ախարես ուժգին
 Քացի հասցըին անձարի մեջքին,
 Վոր նա շունչ-հոգին հավաքած բուռը,

Գլորվեց մինչև մառանի դուռը...
Լեզուն կապվել եր, հառաջը սառել.
Թուքը ցամաքել, կես մարդ եր դառել...

Բայց լերբ սթափվեց,
Նրա պնչերից դուրս լեկավ ծուխը,
Արյունը մեկեն խփեց գլուխը,
Վրեժի բոցը աչքերում շողաց,
Բոռունցքը սեղմվեց, շրթունքը դողաց,
Բայց... ձեռ ու վոտը
Չեր գալի հետը...

Յերբ Մկոն նրան առավ շալակը,
Վոր տանի, գցի նախըշոնց բակը,
Արյուն եր ծորում դիմից միալար,
Նախշելով թափիշ կանաչը դալար:

13

Զատկի գեմ Սոսուն կանչեցին տարան,
Կոչնագիր տվին: Գնաց դատարան:
Միրավոյ սուլիեն նալեց մուրհակին,
Սոսու բութ մատի դրոշմը տակին՝
Յեվ հարցը պարզվեց:
Պարտքը հաստատվեց:
Տուգանք ել դրին:

Տոկոսն ել լեկան, ծախսն ել դատական,
Մոտ լերեք հարլուր ելավ պարտական...

14

Մի որ ել լեկան գրեցին տունը.
Ել գոմ, ել չարդախ, մինչ հավաբունը...
Գրեցին նաև սիրուն պարտեզը,
Ծառ ու տունկ բոլոր և խոտի դեզը:

Աճուրդին վոչ վոք մոտիկ չըգնաց:
Յեվ դուկքը բոլոր Վուկանին մնաց:

15

Այս անցուդարձը թվում եր Սոսուն
Մի ծանը լերազ, լերազ սարսափիւ:
Նա վոչ ուտում եր, վոչ ասում-խոսում:
Մեկ թափ եր առնում,
Ուզում թշնամու արյունը թափի,
Գազանի նման պատառի, լափի,
Բայց... մեկ ել հանկարծ սառչում եր կրկին,
Գլուխը կախվում, ընկնում եր կրծքին,
Յերբ աչքն եր գալիս՝ դռների տակին
Անտեր անոթի լերեխա ու կին...

Թափվեցին հանկարծ մի որ Սոսենց տուն՝
Քաղաքից լեկած շիլ կատարածուն,
Տանուտերն ինքը ու գզիրը կադ
Յեվ ցմփոր Մուխսին՝ փնչալեն, դանդադ՝

Շլտիկը կախեց նշանը կբծքին
Ու հայտնեց Սոսուն՝ հանուն որենքի,
Թե նա այլևս տեր չի իր կալքին:
Թե իսկուն տուն ու պարտեզ միասին
Պիտի դատարկի ու քոչի գնա,
Վոր գուլքը բոլոր վուկանին մնա...
Մի ըոպե ապշեց, քարացավ Սոսին:
— Վհնց... ախար... բա լես, բա մեր տանեցիք...
Ես ինչ փորձանք եր գլխիս բերեցիք...
Մենք մնանք չոլում առանց ապաստան...
Եսենց սև որենք, գուլում դատաստան...

Դալար ճիպոտը հանկարծ շառաչեց.
Սոսին կծկվեց, ցավից բառաչեց,
Ապա շոշափեց վառվող գեմքն իր,
Ուր ձեռը ներկվեց արյունով կարմիր...


Նորից թափ առավ ու լցվեց Սոսին,
Ուզեց հարձակվի, բայց... ձուտիկը փնրբ...
Ու... մարեց կրծքի հուր—կրակը բորբ:
Յեվ գլուխն ելի կռացավ ուսին...

Ազմուկի վրա ներս վաղեց նստոն.
Մոր փեշից կախված՝ մըմնջաց ձուտոն...
Յերբ Մուխսին խոսեց ու պարզեց բանը,
Մեկեն բարձրացավ սուլ ու շիվանը...

Կինը ծեծկում եր, ճմովում, լալի,
Մազերը պոկում, գլխին վայ տալի
Ու բարձր ճշում, կպչելով սնից,
Թե իր դագաղը կերթա ես տանից,
Թե՝ ով վոր փորձի տիրանալ զոռով,
Նա պիտի անցնի դիակի վրով:

Թնգվեց, մթնղեց պաշտպանն որենքի,
Նա ուզեց սանձել ու բերել խելքի
Անգետ կնոջը և գոչեց մոլի.
— Թաւղթ տվեք ինձ, թաւղթ. պոատակոլի...
— Զուռնաչու աղջիկ, քո տունն ակոլի*),
Սէրիր կը քշի, եղ ինչ ես անում,

*) Քանդվի Անդր պաւու նման:



Զակոնի դեմ ես հակառակ կանգնում...
Սուս, ձենդ կտրի, — խրատեց Մուխսին
Ու ձեռը դրած շիլ աղի ուսին,
Խնդրեց, վոր հիմար կնոջը ների,
Թե՛ մարդը նրան խելքի կը բերի:

18

Աղեն մեղմացած՝
Թուղթը դրեց ցած:
— Դե, ինչ ես ասում, Նախիրչով Սոսի,
Քոչում ես, թե չե. վերջնական ասի:

Մարդը հեալեն մտածեց մի պահ,
Շրթունքը կը ծեց ու գոչեց վստահ.
— Զե, չե, չեմ քոչի.
Թեկուզ վոր մորթեք, կամ հանեք ցցի,
Չեք կարող ինձ իմ տանից դուրս քցի...
Յեվ այնպես ըմբոստ նայեց շեշտակի,
Վոր տանուտերը քիչ մնաց ճաքի:

19

Վոսկանը ալրվում վասվում եր տեղում.
Պար ելին բռնել դեերն ուղեղում...
«Ում ա դեմ կանգնում Նախրչոնց Սոսին...
Եղ քանի՞ գլուխ կա նրա ուսին»...

Աղեն կատաղեց: Շլտիկին բոթեց,
Թուլության համար, զորըս դու... կոթեց,
Յեվ, առ հա գզրին՝ ապտակ շառաչուն.
Թե՝ կաղ սատանա, շան վորդի ու շուն,
Յես քեզ կը մորթեմ, կոտորեմ մաս-մաս,
Հավաքիր իսկույն կարպետ ու փալաս,
Կճուճ ու բժուտ, պղինձ-պղնձկալ,
Ելած-չելածը բոլորը վեր կալ
Ու բաշի գլխով շպրտի փողոց...
Ել ինչ նազ ու տուզ, ել ինչ հարց ու փորձ.
Պրիստավիս... քիքիր... դու թաղիքե թնւր...
Դեն քաշվի, սրանց դատաստանն ինձ տուր:—

Յերբ ջուլ ու մուլը փաթթեց փալասում,
Սև տունը բռնեց շիվանը ցասում...
20

Աղմուկի վրա յերդիկ ու բաշի
Կենդանի հեղեղ թափվեց թամաշի:
Գզիրն՝ ապտակի մոմուռը սրառում,
Տասը ձեռ առած՝ հավաքում, ջարդում,
Զվալն եր լցնում մանրունքն անդադար,
Տանն ելած-չելած, բերանը կապում,
Վոր տաներ բաշից*) փողոցը շաղ տար:

*) Պատի գլուխ:

Իսկ Սոսին՝ անշարժ, արտաքուստ հանդաբա,
Արձանի նման աչքերը անթարթ,
Կպել եր սյունից. Վոչ ծպտուն, վոչ ձախութակատ բռնողը*) Նստոն եր միայն:

Կինն առանց կովի չեր տալիս ձեռից
Յեվ վոչ մի խեցատ**) և վոչ իսկ մի ցից.
Ճանկուում եր գզրին, անիծում, չանչում,
Մեկ հարձակվում եր, մեկ ել նահանջում,
Խլվածն յետ չմթում,***) ծվում պահանջում...

Իսկ վեց տարեկան ճուտոն, դոփելով,
Մոր փեշից կպած՝ գնում եր, զալիս
Յեվ աչքից բուռ-բուռ կոակ թափելով,
Նստոյի վողբին արձագանք տալիս...
Սարերն են հուզվում,
Քարերն արտասկում...

21

Մրուտ հացատան դռան քամակից
«Մաղիկն» եր ապուշ և անդիտակից
Աչքերը հառած՝
Մնացել սառած...

*) Դիմադրող:

**) Խեցատ կավե ամանի կտոր
***) Չմթել - թափով խլել.

Դա հորթն եր մանկան, նվերը տատի.
Տան հույսն ապագա մածուն ու կաթի.
Ճուտովի ազիզ ընկերն անբաժան,
Վոր բութ նալում եր Վոսկանին դաժան:

Մինչ Մկոն՝ եսպես կովելով լերկար,
Զվալն եր խցկում խլածն ինչ վոր կար,
Հանկարծ տանուտերն հասավ հորթուկին,
Վիզը ոլորեց, խփեց հատակին
Ու քացով ենպես հարվածեց փորին,
Վոր մանկան ճիչը հասավ աստղերին...

— Դե առ, չոլախ դե, — գոչեց գազանը,
Ես ել տար պատից շպրտի շանը:

Ճուտոն դողդողաց.

Մոր փեշը թողած՝
Վազեց, վոր ազիզ ընկերին գրկի,
Անմեղ կենդանուն պաշտպանի, փրկի,
Բալց դեմքին ենպես մի ապտակ պալթեց,
Վոր Սոսուն կասես ու ոձը խալթեց...

Սարերն հուզվեցին.

Լեռ ու քար լացին...

Իսկ ամբոխն՝ լեկած լերդիկ ու բաշի,
Խուլ մրմունջ սփռեց ոֆ-ի ու վաշ-ի:

Սասին սպրդնեց. մոնչաց, գողաց...
Անկունում ցցված սուր բահը շողաց
Յեզ...կիսեց գանգը զոռ տանութերի...

— Դե լոլի՛ հիմի... դե հիմի տիրի՛...

Մոմոաց Սոսին
Զոհի լերեսին:

Վոսկանն որորվեց, հառաչեց տկար
Ու... զարկվեց գետին: Պրծավ: Ել չը կար:

Մի պահ լոեցին բաշ, տուն ու լերդիկ:
Ապա արթնացան, կասես թե, մարդիկ:
Ոխայի մըմունջն հեղեղեց տունը,
Ոճոռքը դողաց, որորվեց սլունը:

Մի կաթիլ ընկավ շիլ աղի աչից.
Իսկ Մուխսու թոքը հալվեց հառաչից:

Փախեփախն ընկավ ու փոշին պատեց:
Դա ուրյադնիկն եր. հասավ հավարի:
Նա վոտից-գլուխ Սոսուն աչք ածեց,
Տեսավ հոււս չը կա կաշառք-ավարի՝
Մութ գոմը քաշեց նա մարդասպանին,

Ջարդեց, տրորեց, սև բերեց ջանին.
Կապկապած քցեց մտըակի աղաք.
Ծեծելով քշեց, հասցըեց քաղաք:

Իսկ անտիրական մանկանն ու մորը՝
Զուլ ու փալասով քշեցին ձորը,
Վոր ջաղացանի՝ քեռու շվաքում
Կուչ գան ու վողբան իրանց սև որը:

Սիրիրում Սոսու ումըը խավարեց...
Վորբերի հուսը հավիտյան մարեց:
Նստոն ու ձուտոն կարիքից դաժան՝
Միմյանց հետևից գերեզման իջան:

Ոջաղը անցավ:
Ծուխը վերացավ...

Իսկ նրանց չքնաղ պարտիզում դալար,
Սիրուն ծառերի թանձը շվաքում՝
Քեֆ ու խնդում եր լինում միալար
Ցեփ գուռնեն բարձր, բարձր նվազում:

Բամիներ անցան գլխովը գուղի:
Խավարը հալվեց: Արկը շողաց:

Կորավ են ուժը կալքի ու փողի.
Հարուստն անիրավ
Թուխնը շրթունքին՝ ոճի պես սողաց...

Աղքատը դարձավ գյուղի մեջ ակտիվ.
Հիմնեց իերջանիկ կյանքը կոլեկտիվ:
Եւ չը կա զորբան՝ դաժան ու ահեղ:
Նրան սրբել ե
Ալիքն ահարկու, կարմիր-փառահեղ...

Վոսկանի նախկին տունը շեն, զնզան՝
Ալժմ դարձել ե մի սիրուն ակումբ,
Ուր կուլակներից դաղված ծերերը
Յերազի նման
Հիշում են անցած են սև որերը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0351519

453

46996

ԳԻՆԸ ՅՈ ԿՈՊ.